# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 9 | §Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | §Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | §Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | «Փառքի խաչ» մեդալը բաղկացած է 2 մասից՝ ցինկապատ պողպատե հնգանկյուն կախիչից և դրան կապօղակով ամրացած մետաղյա խաչից, որի վրա փռված է 41.5 մմ x 41.5 մմ (շեղումը՝ +/- 1մմ) չափի հավասարաչափ արծիվ՝ կրծքին վահան: 15 x 15 մմ չափերի քառակուսի, ներքևի եզրում լծորդում ունեցող վահանը բաժանված է չորս հավասար մասի. կենտրոնում՝ շրջանի վրա, փորագրված է ջրհեղեղով շրջափակված Արարատ լեռը, գագաթին՝ Նոյան տապանը: Վահանի յուրաքանչյուր անկյունում՝ աջից ձախ, պատկերված են չորս փրկարարական գործողություններ. հրդեհի մարում, փրկարարի օգնություն, ուղղաթիռ՝ աստիճանով, երկու աղավնի՝ ութաթև աստղով: «Փառքի խաչ» մեդալի վրայի արծիվը ոսկեգույն է, որի վեր բարձրացրած թևերը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | խորհրդանշում են պաշտպանվելու և դիմագրավելու հատկություն: Մեդալի հիմքը խորհրդանշում է խաչը, որի գունավոր չորս հիմնական թևերը բաց շագանակագույն են, իսկ Մասիս սարը և Նոյան տապանը, սև ուրվագծումից բացի, ունեն համապատասխան երանգներ՝ կարմրաբոց հրդեհ, ոսկեգույն փրկարարական պարան, փրկարարական ուղղաթիռ: Ոսկեգույն երանգով պատկերված է փրկարարություն խորհրդանշող ութթև աստղը՝ քաղաքացիական պաշտպանության եռանկյան կապույտ խորհրդանիշով: Մեդալի կախիչը ասեղային ամրակով է: Կախիչի չափսերն են՝ 39x27x39x24x24 (շեղումը՝ +/- 1մմ), որը երեսպատված է 24 մմ լայնություն ունեցող մետաքսե մուարե նարնջագույն ժապավենով: Ժապավենի երկու եզրերով անցնում են մոխրագույն՝ 1 մմ լայնությամբ զոլակներ: Կախիչի կենտրոնով իրար 2 զուգահեռ անցնում են 5 մմ լայնությամբ երկնագույն երկու զոլակներ 8 մմ հեռավորության վրա: «Փառքի խաչ» մեդալի դարձերեսի կենտրոնական մասում երեք շարքով, 2.0 տառաչափով առկա է «ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» լազերային փորագրությամբ հայերեն գրությունը: Դարձերեսին լազերային եղանակով դաջվում է հերթական համարը (սկսած՝ 001-ից): Մատակարարը ապրանքը նախապես պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ, իսկ մատակարարելուց ապրանքի բեռնաթափումը իրականացնի իր բանվորներով: Կցված նկարը կրում է տեղեկատվական բնույթ: Կրծքանշանի բնութագիրը բխում է ՀՀ Փոխվարչապետի 2025թ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | սեպտեմբերի 1-ի N 577-Ն որոշումից։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 9 | | | | |